ՈՒՂԵՑՈՒՅՑ

«Խորհուրդներ սկսնակ գիդերին»

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ԵՎՐԱՍԻԱ ՀԱՍԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱՐԱՄ

RESTART foundation

CRRC Armenia

ՈՒՂԵՑՈՒՅՑ

«Խորհուրդներ սկսնակ գիդերին»

Այս ուղեցույցը ստեղծվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ԵՄ-ն հանուն երիտասարդների. Ուսանողական ժողովրդավարություն հիմա» ծրագրի շրջանակներում: Ուղեցույցի բովանդակության համար պատասխանատու են հեղինակները: Բովանդակությունը կարող է չհամընկնել Եվրոպական միության և ծրագիրն իրականացնող կազմակերպությունների, այդ թվում՝ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի, «Ռեստարտ» գիտակրթական բարեգործական հիմնադրամի և Հայաստանում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի տեսակետների հետ:

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՍԿՍՆԱԿ ԳԻԴԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուղեցույցում ներկայացված է 2022 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին Տավուշի մարզի մի շարք տեսարժան վայրեր (Գոշավանք, Գոշ լիճ, Կիրանցի վանական համալիր) իրականացրած արշավները: Արշավների նպատակն էր ծանոթանալ Տավուշի մարզի հանրահայտ գբոսաշրջային ռեսուրսներին, որոնց ընթացքում ձեռք բերված գիտելիքներով և հմտություններով կկիսվենք սկսնակ գիդերի հետ:

Այս ուղեցույցը բավականաչափ տեղեկատվություն կհաղորդի սկսնակ գիդերին:

Սիրելի՛ սկսնակ գիդեր՝ նյութին ծանոթանալով, դուք կունենաք հաջողված և հետաքրքիր արշավներ, կկարողանաք արշավականներին հասցնել ճիշտ նպատակակետին, ովքեր ևս կբացահայտեն տավուշյան այս գողտրիկ վայրերը և կհիանան դրանցով:

Ուղեցույցի նպատակն է նրանց օգնել, տալ հստակ և փորձված գիտելիքներ վերոնշյալ վայրերի մասին, օրինակ՝

- ի՞նչ նշանակություն ունեն դրանք,
- ի՞նչ հետաքրքիր պատմություններ կան այդ վայրերի մասին,
- առաջին անհրաժեշտության ի՞նչ իրեր կարելի է վերցնել նշված վայրեր արշավելու ժամանակ,
- ի՞նչ արգելքներ և խոչընդոտներ են եղել մեր արշավների ժամանակ:

Այս և այլ հարցերի պատասխաններ կարող եք ստանալ հաջորդիվ:

Առաջին արշավը իրականցրել ենք հունիսի 27-ին, ուղղությունը եղել է դեպի Գոշի լիճը, որից հետո այցելել ենք՝ Գոշավանք, ապա Գոշավանքի դիմացի բլրին գտնվող Մխիթար Գոշի դամբարան:

Գոշ լիճը գտնվում է Տավուշի մարզի Գոշ գյուղից 2.2 կմ հարավ-արևմուտք: Այս հրաշալիքը իր անվանումը ստացել է հայ գրող և հասարակական գործիչ Մխիթար Գոշի անունից:

Լիճը գտնվում է անտառի մեջ, շրջապատված տարբեր բուսատեսակներով և ծաղիկներով: Լիճ տանող ճանապարհին կան այնպիսի բույսեր, որոնք բուժում են տարբեր հիվանդություններ և որոնց հյութը օգտակար է առողջության համար: Լճի ավազանի առավելագույն լայնությունը 80 մետր է, երկարությունը՝ 100 մետր: Լճի խորությունը հասնում է 8 մետրի, իսկ ծավալը՝ շուրջ 1500 խորանարդ մետր: Ներկայումս ջուրը սնուցվում է անձրևաջրերի և հալոցքների շնորհիվ, բայց լճի համար այսօրվա ամենավտանգավոր խնդիրը ճահճացումն է: Գոշ լիճը կարելի է համեմատել Պարզ լճի հետ, դրանք ունեն որոշակի նմանություններ, բայց ի տարբերություն Պարզ լճի Գոշ լիճը ավելի վատթար վիճակում է և զբոսաշրջիկների այցելության մակարդակով շատ չնչին է զիջում Պարզ լճին: Լճում կան մեծ քանակությամբ գորտեր, մանր ձկներ և խեցգետիններ:

Ինչպե՞ս մենք հասանք Գոշ լիճ

Արշավը սկսել ենք ավտոերթով, առավոտյան 09:15 դուրս ենք եկել ք. Իջևանից և 40 րոպե անց եղել նպատակակետում, որտեղից սկսել է քայլարշավը: Համապատասխան իրերը (սնունդ, ուսապարկեր, զովացուցիչ ըմպելիքներ, ջուր) արշավականներին բաժանելուց հետո սկսել ենք բարձրանալ Գոշ լիճ: Լիճ կարելի է գնալ և՛ մեքենայով, և՛ ոտքով: Քանի որ ճանապարհը շատ մեքենաների համար անանցանելի է, և մենք չունեինք համապատասխան <<ՈՒԱԶ>> մակնիշի ավտոմեքենա (հնարավոր է բարձրանալ միայն այս մեքենայով) ինչպես նաև մեր նպտակն էր ոտքով բարձրանալ և ծանոթանալ տեղանքին, մենք գնացինք ոտքով:

Մեր արշավի ժամանակ եղանակը մռայլ և անձրևոտ էր, ոտքով բարձրանալը շատ դժվար էր, գետինը թաց էր և սայթաքելու հավանականությունը շատ մեծ էր: Այդպիսի անբարենպաստ եղանակին մենք լիճ հասանք 50-60 րոպեում:

Նույնիսկ շատ վատ եղանակային պայմանները չեն կարող խանգարել այցելել Գոշ լիճ, քանի որ այն գեղեցիկ է տարվա բոլոր եղանակներին:

Դեպի Գոշի լիճ արշավի մեկնելու ժամանակ մենք վերցրել էինք և խորհուրդ ենք տալիս վերցնել՝

- առաջին բուժօգնության փոքրիկ դեղարկղ,
- սնունդ (ըստ անհրաժեշտության),
- ջուր (խմելու, ինչու չէ նաև լվացվելու համար), զովացուցիչ ըմպելիքներ,
- ակնոցներ, գլխարկներ (կախված եղանակային պայմաններից),
- փակ հագուստ (միջատներից պաշտպանվելու համար),
- տեսախցիկ՝ գեղեցիկ լուսանկարվելու համար:

Գոշի լիճը Երևանից գտնվում է 132 կմ հեռավորության վրա, Դիլիջանից՝ 34 կմ, Գոշավանք վանական համալիրից՝ 12.5 կմ, Պարզ լճից՝ 35 կմ:

Գոշի լճից իջնելուց անմիջապես հետո բարձրացանք Գոշավանք:

ԳՈՇԱՎԱՆՔ

Տավուշի մարզում, Գոշ գետի հովտում գտնվող ներկայիս Գոշ գյուղը հիմնվել է 1840-1845 թվականներին: Առաջին բնակիչները եղել են Բարեկամավան և Կոթի գյուղերից վերաբնակեցվածները: Գոշը որպես հին բնակատեղի ենթադրվում է, որ գոյություն է ունեցել 10-11-րդ դարերից: 12-րդ դարում Մխիթար վարդապետը հեղինակեց իրավաբանական մտքի մեծագույն նվաճումների շարքին դասվող Դատաստանագիրքը: Հենց այդ գողտրիկ վայրում էլ Մխիթար Գոշը անց է կացրել իր կյանքի 25 տարիները: Նա ժամանակի ճանաչված գիտնականներից էր, աստվածաբան, օրենսդիր, առակագիր ու մանկավարժ:

1180-ական թվականների երկրաշարժից ավերված Գետիկ վանքի մետակայքում 1188 թվականին իշխան Իվանե Զաքարյանեի աջակցությամբ էլ հիմնել է Գոշավանքն ու այդտեղ տեղափոխել միաբանությունը: Վանական համալիրը կեչվել է Նոր Գետիկ, իսկ 1213 թվականին Մխիթար Գոշի մահվանից հետո այն վերանվանվել է Գոշավանք:

1191-1196 թվականներին քուրդ Վաչության իշխանի և Խաչենի Վախթանգ իշխանի ու նրա եղբայրների օգնությամբ՝ Մխիթար Գոշը կառուցել է համալիրի Ս. Աստվածածին եկեղեցին: 1907 թվականին օծվել է և բացվել:

Աղոթատունը զույգ որմնամույթերով գմբեթավոր դահլիճ է: Պատկանում է խաչագմբեթ եկեղեցիների տիպին: Ավագ խորանին կից կրկնահարկ զույգ ավանդատներով և զույգ խորշերով: Պահպանվել են բազմաթիվ արձանագրություններ:

1197-1203 թվականներին Ս. Աստվածածնին կցվել է քառասյուն կենտրոնակազմ հորինվածքով գավիթը: Ծածկի կենտրոնում կանգնեցվել է ութանիստ երդիկավոր գմբեթ:

Համալիրի մաս են կազմում նաև Ս. Հռիփսիմե և Ս. Առաքելոց մատուռները՝ կառուցված 13-րդ դարի սկզբին Մխիթար Գոշի կողմից:

Համալիրի մյուս կառույցը, որը Ս. Գրիգոր է կոչվում, գտնվում է հարավ և գրեթե կրկնում է վերջինիս հորինվածքը: Կառուցվել է 1231 թվականին Մարտիրոս վանահոր և նրա եղբայր Գրիգորի կեղմից: Ըստ պատմական տվյալների Ս. Գրիգորի շինարարությունն ընդհատվել է Ջալալեդինի արշավանքի պատճառով և ավարտվել Գրիգոր կապալեցու ջանքերով:

Ս. Գրիգոր Լուսավորիչ փոքր եկեղեցին 1237-1241 թվականների կառույց է: Հիմնել է ամիրսպասալար ավագ Զաքարյանի կառավարիչ Գրիգոր Տղա իշխանը:

Վանքում առանձնակի տեղ են գրավում խաչքարերը, որոնց շարքում առանձնանում են քարագործ վարպետ Պողոսի կերտած խաչքարերը:

1254 թվականին Մխիթար Գոշի դամբարանի մոտ՝ վանքի հարավային բլրալանջին Խաչատուր վարդապետը և Բարսեղը կառուցել են խորանարդաձև ծավալով գմբեթավոր Ս. Գևորգ փոքր եկեղեցին: Ս. Գևորգից դեպի արևմուտք՝ բլրակի վրա, Մխիթար Գոշը կառուցել է Ս. Համբարձման մատուռ-դամբարանը, որտեղ և նա թաղվել է 1213 թվականին:

Ինչպե՞ս մենք հասանք Գոշավանք

Դեպի Գոշավանք տանող ճանապարհատրանսպորտային պայմանները մատչելի են տուրեր կազմակերպելու համար: Գոշավանք վանական համալիրի դիրքն այնպիսին է, որ մինչև վերջ կարելի է գնալ մեքենայով: Վանքը գտնվում է Գոշ գյուղի կենտրոնում: Մենք առանց որևէ խոչընդոտի հասանք վանական համալիր, մեզ խանգարում էր միայն Գոշի լճի ճանապարհից ստացած հոգնածությունը, բայց եկեղեցի մտնելուն պես տիրեց հանգստություն և թեթևություն: Մեզ ուղեկցող բանախոսը մանրամասն ներկայացրեց վանական համալիրի ստեղծման պատմությունը, համալիրի շինությունների ճարտարապետությունը և գեղարվեստական հարդարման միջոցները:

Գոշի լճից իջնելիս եղանակը ավելի բարենպաստ դարձավ և արշավը շարունակելը ավելի հեշտ էր: Թեպետ տարվա տարբեր եղանակներին կլիման թույլ է տալիս այցելել Գոշավանք: Մարտից մինչև նոյեմբեր եղանակը համեմատաբար կայուն է, իսկ ձմեռը երկար չի տևում: Կախված եղանակային պայմաններից Գոշավանքը միշտ էլ մեծ պահանջարկ ունի նաև օտարերկրացի զբոսաշրջիկների կողմից:

Ի տարբերություն Գոշի լճի, Գոշավանք այցելելիս շատ բան վերցնել պետք չէ:

Գոշավանքին մոտակա տեսարժան վայրերն են Գոշի լիճը, որը գտնվում է 12 կմ հեռավորության վրա, Հաղարծին վանական համալիրը՝ 20 կմ իսկ Պարզ լիճը՝ 33 կմ:

Գոշավանքից հետո բարձրացել ենք Մխիթար Գոշի դամբարան, որտեղից աննկարագրելի գեղեցիկ տեսարան էր բացվում դեպի Գոշավանքը: Ամբողջ ճանապարհին մեզ ուղեկցող բանախոսները ներկայացնում էին երթուղու երկարությամբ գտնվող լեռնաշղթանները, բնակլիմայական պայմանները, բուսականությունը, հանգստի գոտիները, զբոսաշրջայիին ենթակառուցվածքները, հուշարձանների պատմությունը:

Արշավն ավարտել էինք ժամը 17:00-ին, իսկ ժամը 18:00-ին արդեն տաանն էինք:

Երկրորդ արշավը իրականացրել ենք հուլիսի 16-ին, ուղղությունը եղել է դեպի Կիրանց:

Գոշի լճի համեմատ ոտքով Կիրանցի վանք հասնելը անսահման բարդ էր և տանջալի:

ԿԻՐԱՆՑԻ ՎԱՆՔ

Կիրանց վանական համալիրը գտնվում Տավուշի մարզի Կիրանց գյուղից մոտ 12 կմ արևմուտք, Կիրանց-ջուր վտակի ձախ ափին ընկած հարթավայրում:

Կիրանց վանքը կառուցվել է 13-րդ դարում:

Ժողովրդական մի ավանդության համաձայն՝ հուշարձանը կառուցող քարագործ վարպետն ունենում է շատ ընդունակ աշակերտ: Այդ աշակերտը մեն-մենակ կառուցում է այս վանքը: Վերջացնելուց հետո կանչում է վարպետին՝ իր առաջին աշխատանքը գնահատելու: Վանքն այնքան փառահեղ է լինում, որ անվանի վարպետը նախանձում է աշակերտին: Նա ամեն կերպ աշխատում է թերություն գտնել, բայց չի կարողանում: Երկար մտածելուց հետո ասում է՝ «Կիրը անց է կացրել»: Այստեղից էլ վանքի անունը մնում է Կիրանց վանք:

Վանքը բաղկացած է աղյուսաշեն, սրբատաշ քարե մանրամասներով երեք եկեղեցուց, սրահ-գավիթներից, սեղանատնից, բնակելի և տնտեսական շենքերից, կամարակապ մեծ դարպասով պարսպից:

Համալիրը բաղկացած է երեք եկեղեցիներից, սեղանատնից և մի քանի տնտեսական շենքերից՝ բոլորը շրջապատված պարիսպներով: Վանքի համարյա բոլոր կառույցները աղյուսաշեն են և այդ տեսակետից հայկական միջնադարյան ճարտարապետական եզակի հուշարձաններ են:

Վանքը կազմված է՝

- Գլխավոր եկեղեցուց
- Երկրորդ և երրորդ եկեղեցիներից
- Սեղանատնից

Վանքը շրջապատված էր պարսպով, որից միայն ավերակներ են մնացել: Մինչև այսօր պահպանվել է դեպի հարավ-արևմուտք բացվող մեծ կամարակապ դարպասը:

Վանքի ստեղծման ժամանակ այդ տարածքում բնակվել են քաղկեդոնություն ընդունած հայեր: Գլխավոր եկեղեցուց արևելք տարածվել է վանքի գերեզմանոցը, ուր այժմ էլ պահպանվում է 1698 թ. թվագրվող արձանագիր տապանաքարը:

Ինչպե՞ս մենք հասանք Կիրանց

Ճանապարհատրանսպորտային պայմանները Կիրանց վանք տանելու համար շատ հարմար են, կարելի է գնալ թե՛ անձնական մեքենայով, թե՛ ոտքով, թե՛ ձիերով և թե տարբեր տուրիստական ընկերությունների ծառայություններից օգտվելով, բայց մենք մեր արշավն արեցինք ոտքով:

Ինչպես Գոշ արշավելու ժամանակ, այնպես էլ այդ օրը ավտոերթը սկսեցինք առավոտյան՝ ժամը 09:15-ին, ք. Իջևանից: Ժամը 10:00-ին Կիրանց համայնքի ծայրամասի, վերջին բնակավայրերի մոտ կանգնեցին մեքենաները: Մենք վերցրեցինք մեր իրերը և քայլեցինք առաջ:

Ոտքով Կիրանցի վանք հասնելը (արշավելը) շատ դժվար էր, քանի որ 27 կմ-ից ավելի քայլեցինք ոտքով (մոտավորապես 4-5 ժամ), բայց միևնույն ժամանակ հաճելի էր, էքստրիմի սիրահարների համար սա հարմար տարբերակ է: Մինչև վանք հասնելը 2 անգամ անցանք ոչ այդքան խոր գետի միջով: Վանքի ճանապարհին է գտնվում Սրանոցի կամուրջը, որտեղ կանգնեցինք

և փոքր ինչ հանգստացանք: Կամուրջը գտնվում էր խարխուլ վիճակում, և մենք հնարավորություն չունեցանք ավելի մոտիկից ուսումնասիրել այն: Մոտակայքում կային տաղավարներ, որտեղ կարելի է կանգ առնել սնվել և հանգստանալ:

Մենք մեզ հետ վերցրել էինք

- առաջին բուժօգնության փոքրիկ դեղարկղ,
- սնունդ (ըստ անհրաժեշտության)
- ջուր (խմելու, ինչու չէ նաև լվացվելու համար, թեպետ ճանապարհին կարելի է գտնել սառնորակ աղբյուր)
- ակնոցներ, գլխարկներ, արևից և ցրտից պաշտպանող միջոցներ (կախված եղանակային պայմաններից)
- փակ, բայց հարմար հագուստ (միջատներից, փշերից և նմանատիպ երևույթներից պաշտպանվելու համար)

Քանի որ մենք չգիտեինք, որ պետք է անցնենք գետի միջով, այդ պատճառով չէինք վերցրել հավելյալ հագուստ և կոշիկներ: Արշավականների մի մասը քարերի վրայով զգուշորեն կարողացավ առանց թրջվելու անցնել գետը, իսկ մյուս մասը անցան գետի միջով:

Որոշ ժամանակ քայլելուց հետո մեզ հանդիպեց «ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենա: Արշավականների մեծամասնությունը մոտավորապես 10 րոպե գնացին մեքենայով, դա ևս ուներ իր հետաքրքրությունը:

Քիչ էր մնացել հասնելու Կիրանց վանք, ճանապարհին մտանք Չար-

ղուշան, որտեղ սնվեցինք, հանգստացանք և շարունակեցինք ճանապարհը:

Կիրանցի վանք էինք հասել մոտավորապես ժամը 15:00-ին: Շատ ժամանակ չանցկացրեցինք վանքում, քանի որ արդեն ուշ էր և պետք է դեռ այդքան քայլեինք ոտքով: Երեկոյան ժամը 20:00-ին մենք արդեն տանն էինք:

Հասցրեցինք ուսումնասիրել վանքի կառուցվածքը, որը շատ հին էր, բայց միևնույն ժամանակ անչափ տարբերվող կառույց էր:

Այդ օրը եղանակը շատ արևոտ էր, ճանապարհը՝ փոշոտ, իսկ արևը ուժեղ վառում էր: Բայց կարելի է ասել՝ այդ փորձությունը մենք պատվով հաղթահարեցինք և բացահայտեցինք տավուշյան ևս մեկ գեղեցկուհու: Եղանակային պայմանները տարվա բոլոր ամիսներին նպաստավոր է վանք հասնելու համար:

Կիրանցին մոտակա տեսարժան վայրերն են Իջևանի պատմաերկրագիտական թանգարանը, այն գտնվում է Կիրանցից 36 կմ հեռավորության վրա, Լուսահովիտի Մորո Ձորո վանքը՝ 35 կմ, Իջևանի դենդրոպարկը՝ 37 կմ:

Անի Թիրաբյան

«ԱՅՑԵԼԻ՛Ր ՏԱՎՈՒՇ: ՁԳԱ՛ ՄԵՐ ՁԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ»

Տավուշը տարբերվում է Հայաստանի մյուս մարզերից գետերի և լճերի, լեռնային բարձունքների ու խիտ անտառների լիությամբ, ինչի շնորհիվ էլ գեղատեսիլ տարածաշրջանը գրավում է զբոսաշրջիկների ու ճանապարհորդների ուշադրությունը: Լեռնամագլցումը, զբոսանքը դժվարանցանելի անտառներում, ինչպես նաև պարզկա լճերի ու ջինջ երկնքի համադրությունը մեծ հաճույք կարող են պատճառել յուրաքանչյուրին: Իսկ եթե էքստրիմի սիրահար ես ու ադրենալին ես փնտրում, ապա հաստատ կուզես նաև գոնե մեկ անգամ բարձունքից հայացք նետել այնպիսի գեղեցկությանն, ինչպիսին միայն Տավուշի մարզում կգտնես:

Տավուշի մարզն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ աչքի է ընկնում բնության բազմազանությամբ: Տավուշի մարզի գեղեցիկ բնաշխարհը, մեղմ կլիման, մաքուր ու առողջարար օդը հնարավորություն են ստեղծում մարզի տնտեսության զարգացման համար: Տավուշի մարզը հարուստ է պատմամշակութային օբյեկտներով, որոնց շարքին են դասվում ամրոցները և բերդերը (Տավուշ, Մանթաշ, Բուդուր, Գավարզին, Գագա, Բերդաքար, Ուզունթալայի դիտաշտարակ ամրոցաձև շենք, Թանիկ, Աղջկաբերդ, Աշոտ Երկաթ, Կայան, Բերդավան), եկեղեցիները և վանքերը (Հաղարծին, Առաքելոց, Դեղձնուտ, Սամսոն, Սրվեղ, Կիրանց, Մակարավանք, Ջուխտակ վանք, Մաթոսավանք, Գոշավանք, Մորու ձոր կամ Ծռվզ վանք, Ծխմուրադի վանք, Վարագավանք, Կապտավանք, Աղավնավանք, Խորանաշատ վանական համալիր), խաչքարերը և մահարձանները (Կիրանց, Բերքաբեր, Գանձաքար, Գոշ, Հաղարծին, Քնած խաչքարեր՝ Բերդում, Մխիթար Գոշի մահարձան, Մշկավանք), քարավանատները (Առաքելոց գյուղատեղի), կամուրջները (Սալահ, Սրանոց), արհեստները (գորգագործություն, ասեղնագործություն, ժանեկագործություն, փայտամշակություն, քարագործություն-քանդակագործություն, գինեգործություն), տոներավանդույթներ (Վարդավառ, Նուրի-նուրի, Չոբանի օր, Եդի օրեր), խաղերը (Ձջլախտի (տղաների խաղ), Կլասի, Կոխ, Քարկտիկ (տյապկի), Թելով խաղ:

Տավուշի մարզի կլիման բարեխառն է՝ չափավոր տաք ամառներով և մեղմ ձմեռներով, իսկ հյուսիսային և հյուսիս-արևելյան ցածրադիր գոտիներն աչքի են ընկնում չոր մերձարևադարձային կլիմայով: Լեռնագրական առանձնահատկություններով պայմանավորված, մարզի հարավային և հյուսիսա-

յին մասերը կլիմայական պայմանների առումով բավականին տարբերվում են: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 600-750 մմ:

Մարզի ջրագրական ցանցը պատկանում է Կուր գետի ավազանին: Խոշոր գետերից են հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք հոսող Աղստևը և ծայր հյուսիս-արևմուտքում փոքր ավազան զբաղեցնող Դեբեդը: Մարզում կան նաև լճեր՝ Պարզ, Ժանգոտ, Գոշի լիճը:Մարզը հարուստ է նաև հանքային բուժիչ ջրերով՝ Թթու ջուր-Ակնաղբյուր, Վազաշենի, Ոսկեպարի հանքային ջրերը: Մարզում են գտնվում թվով 5 ջրամբարներ՝ Ջողազի (45 մլն խմ), Հախումի (12 մլն խմ), Տավուշի (5 մլն խմ), Այգեձորի (4 մլն խմ) և Խաշթառակի (0.12 մլն խմ), որոնք հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակով: Մարզում հանդիպող բույսերից շուրջ 50-ը և կենդանիների զգալի մասը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

Տավուշում առանձնակի նշանակություն ունեն արգելավայրերը: Դրանցից առանձնանում է Ախնաբաթի կենու պուրակ արգելավայրը:

Այն բնության հատուկ պահպանվող տարածք է: Գտնվում Միափորի լեռնաշղթայի հարավարևմտյան լանջերին, Ծաղկուտ լեռնաբազուկի վրա, Աղավնավանք գյուղի մոտ, Ախնաբաթի եկեղեցու հարևանությամբ:

Այստեղ աճում են 25մ բարձրություն և բնի 70-90 սմ տրամագիծ ունեցող 300-400 Միափորին լեռնաշղթառեր: Ուղղակի պետք է լինել Կենու պուրակում, և զգալ նրանց բուրմունքը:

Պուրակում կհանդիպեք տարբեր հատապտուղների, սնկերի: Ձերծ մնացեք դրանք օգտագործել, քանի որ կարող են թունավոր լինել:

Դիլիջանի բնությունը ևս մտածել է մեր մասին:

Եթե արշավների սիրահար ես, ապա անպայման պետք է կանաչ արահետներով անցնես մի լեռնագագաթից մյուսը, որ ճանապարհին հանդիպես գունեղ մարգագետիններում արածող ձիերի ու եղջերուների: Մեկ անգամ գաս Դիլիջան ու էլ չես մոռանա այս դարավոր ծառերով, բուժիչ ու օգտակար խոտաբույսերով հարուստ հրաշք աշխարհը, որը պետք է քայլելով բացահայտել: Իսկ ընտրված ճանապարհի երկարությունը կախված է քո ցանկությունից և հանդուրժողականությունից: Այստեղ կարող ես զբոսնել ինչպես մի քանի ժամ, այնպես էլ օրեր:

Չմոռանաս նաև անպայման գոնե մեկ անգամ քայլարշավի երթուղիներով անցնել դեպի տեղանքի երկու հայտնի լճերը՝ Պարզ (33 կմ) և Գոշ (12կմ): Լճերն արտասովոր գեղեցկություն ունեն տարվա յուրաքանչյուր եղանակի: Լավ ճանապարհները հնարավորություն են տալիս հասնել Գոշավանք վանական համալիր անձնական մեքենայով:

Եթե դու արշավորդ ես, ուզում ես գալ Տավուշ սիրում ես արկածներ, պարզապես անհրաժեշտ են սուր զգացողություններ ու ադրենալինով լի արկածներ, ապա արի՛ Իջևան, իսկ եթե հակառակը ավելի շատ սիրում ես հանգիստ, գյուղական կոլորիտ արի՛ Բերդ: Իսկ եթե նախընտրում ես առողջարանային, էկոլոգիական, կրթական զբոսաշրջություն, քեզ սպասում են Դիլիջանում:

Դե ինչ, մտածո՞ւմ եք, որ արդեն մասամբ գիտեք Տավուշի մարզի մասին: Էլ ի՞նչը կարող է զարմացնել այն անհատին, որը գիտի՝ ինչ է ուզում և ուր է գնում: Մթնաձոր գետի հովիտ՝ Եղունիկի (Աղավնու քարայր), Սլուլի քարայր, հին գյուղատեղի, միջնադարյան քարանձավներ, որտեղ ժամանակին ապրել են ճգնավորները: Վայրը իսկապես կախարդական է անկախ տարվա եղանակից:

Ոսկե կանոն...

Արշավականների համար չկա վատ եղանակ: Բոլորը յուրովի են և հիասքանչ, բայց կան արշավներին նախապատրաստվելու անհրաժեշտ կանոններ:

Արշավի առաջնահերթ պայմաններից է շարքով քայլելը: Չի կարելի առաջ անցնել խմբի ղեկավարից, կամ հետ ընկնել վերջում քայլող ուղեկցորդից: Խմբի հետ արշավի մասնակցելիս միշտ պետք է հիշել, որ խումբը մի օրգանական համակարգ է, և բոլորս պատասխանատու ենք մեկս մյուսի համար: Արշավի ընթացքում կարող են հանդիպել տարբեր հատապտուղներ, սնկեր: Զերծ մնացեք դրանք օգտագործելուց, քանի որ կարող են թունավոր լինել: Մի թողեք աղբ Ձեր հետևից և մի վնասեք բնությունը և մշակութային հուշարձանները: Հավաքված աղբը վերցրեք Ձեզ հետ:

Ուսապարկ, կոշիկը պետք է լինի հաստ տակացուով, քանի որ լեռնային տեղանքում բարակ կեդերով քայլելիս ամեն քարը զգում ես, պետք է ինքդ կարողանաս քեզ տանել ուտելիքը, դեղատուփը, ջուրը:

Պարտադիրներից է արևային գլխարկը, արշավային ձեռնափայտը:

Այս բոլոր բնական հրաշալիքները տեսնելիս գուցե դու էլ մտածես ինչպես բազմաթիվ ճամփորդողներ ու ասես, որ Տավուշը «Փոքր Շվեյցարիա է Հայաստանում»: Սակայն եթե մի փոքր երկար պտտվես թավ բնության մեջ, վայելես տեղի մաքուր օդն ու հանդարտ մթնոլորտը, կհասկանաս տավուշյան հեքիաթն աշխարհի էլ ոչ մի ուրիշ անկյունում չես կարող գտնել:

Աստղիկ Բարսեղյան

ԼՈՒՍԱԾՈՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏՔԸ

Նախ անդրադառնանք, թե ինչ է իրենից ներկայացնում քարանձավը և հաջորդիվ կներկայացնենք Լուսաձորի քարանձավների մասին:

Քարանձավը երկրակեղևի վերին շերտերի դատարկ տարածությունն է, որը Երկրի մակերևույթ է դուրս գալիս մեկ կամ մի քանի ելքերով: Առաջանում է ջրի ներգործությամբ հեշտ լուծվող ապարների (կրաքար, դոլոմիտ, բազալտ, գիպս եւ այլն) լվացատարման և այլ շարժընթացների հետևանքով:

Քարանձավները որպես ուսումնասիրության աղբյուր սկսել են դիտարկվել 20-րդ դարի կեսերից, հետևաբար քարանձավագիտությունը համարվում է երիտասարդ գիտություն: Այդ է պատճառը, որ քարանձավների մասին պատմող գրքերը մեզանում քիչ են: Այնուհանդերձ, դրանք կան և ընթերցող հասարակությունը քարանձավների մասին կարող է կարդալ Կաստերե Նորբերի «Տասը տարի գետնի տակ», «Անդունդի կանչը», Էդվարդ Սարգսյանի «Քարանձավները բացում են իրենց գաղտնիքները» և Սամվել Շահինյանի «Հայաստանի քարանձավները» գրքերում:

Դեռևս հնագույն ժամանակներից՝ քարանձավները իրենց ուրույն և որոշիչ դերն են ունեցել մարդկային քաղաքակրթության ձևավորման և հետագա զարգացման գործընթացում: Դրանք ապաստան են եղել նախամարդկանց համար՝ թույլ տալով դիմակայել ցրտաշունչ ձմեռներին և պաշտպանվել վայրի կենդանիների հարձակումներից: Քչերը գիտեն, բայց այսօր էլ աշխարհի որոշ երկրներում կարելի է հանդիպել այնպիսի մարդկանց, որոնք նախընտրում են բնակվել քարանձավներում: Ճիշտ է՝ մեր օրերում նման մարդկանց թիվը շատ քիչ է, բայց, ընդամենը 60 տարի է անցել այն օրից, երբ 1958 թվականին Հայաստանում վերջին մարդը լքեց հազարամյակներ շարունակ իր բնակավայրն հանդիսացող քարանձավը: Այսօր էլ Գորիսի տարածաշրջանի Խնձորեսկ գյուղում կարելի է տեսնել և զրուցել այն մարդկանց հետ, որոնց մանկությունն անցել է Հին Խնձորեսկի քարանձավներում:

Քարանձավների դասակարգման բազմաթիվ մոտեցումներ կան, սակայն հետազոտողների մեծամասնությունը գտնում են, որ առավել արդյունավետ է դրանք դասակարգել ըստ ծագման: Քարանձավները լինում են բնական և անթրոպոգեն ծագման:

Ըստ ծագման՝ բնական քարանձավները լինում են կարստային, տեկտոնական, էրոզիոգեն, հրաբխային և սառցադաշտային:

Աշխարհում կան հազարավոր քարանձավներ, որոնք ոչ միայն ծառայել են մարդու համար որպես բնակավայր, այլև նրանցից որոշներն ունեցել են ծիսապաշտական նշանակություն: Այդպիսի քարանձավներում բնակվելն արգելված էր: Նման մի քարանձավում՝ Արենի 1-ում, 2010 թվականին հայ-իռլանդական հնագիտական միացյալ արշավախումբը հայտնաբերել է մինչև օրս աշխարհում հայտնի ամենահին կոշիկը, որը թվագրվում է Ք. ա. 4-րդ հազարամյակով:

Հայաստանի քարանձավների թիվը հասնում է մի քանի տասնյակի, որոնցից շատերի նշանակությունը թե՛ բնապահպանության, թե՛ քարանձավագիտության տեսակետից շատ մեծ է:

Տավուշի մարզում որպես զբոսաշրջային նոր ուղղություն կարող է հանդես գալ քարանձավային զբոսաշրջությունը՝ իր բոլոր տեսակներով՝ հիմնվելով մարզի քարանձավային ռեսուրսների բազմազանության և դրանց զբոսաշրջային մեծ ներուժի վրա: Սակայն՝ ներկայումս մարզի քարանձավների մեծ մասը կա՛մ ընդհանրապես ուսումնասիրված չէ, կա՛մ թերի է ուսումնասիրված, ինչը բարդացնում է զբոսաշրջային նոր արտադրանքի ձևավորման գործընթացը: Տավուշում առկա են ավելի քան 100 փոքր և միջին, ինչպես նաև տասնյակ խոշոր քարանձավներ, որոնց մաքսիմալ բարձրությունը կազմում է 6-7 մետր, իսկ երկարությունը՝ 25-35 մետր:

Տավուշի մարզի հայտնի քարանձավներից է՝

1. Գագ բերդի քարանձավ (Տավուշի մարզ, Նոյեմբերյանի շրջան, գ. Կոթի):
2. Լաստիվերի քարանձավ (Տավուշի մարզ, Իջևանի տարածաշրջան, Ենոքավան գյուղի մոտ):
3. Զրնգանի քարայր (Տավուշի մարզ, Իջևանի տարածաշրջան, գ. Դիտավան, Համզա լեռան գագաթին):
4. Գավարգին լեռան քարանձավ (Ադրբեջանի Ղազախ քաղաքի և ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի Բերքաբեր գյուղի միջև):
5. Տեսիլք քարանձավ (Տավուշի մարզ, Իջևանի տարածաշրջան, Գանձաքար գյուղից արևելք, Տեսիլք լեռան արևելյան կողմում):
6. Կանաչ քարանձավ (Տավուշի մարզ):

Քարանձավների բազմազանությամբ աչքի է ընկնում նաև Լուսաձոր գյուղը: Լուսաձոր գյուղը գտնվում է Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանում, Մթնաձոր գետի ստորին հոսանքի շրջանում: Նախկինում գյուղը անվանել են Խավարաձոր: Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արցախի Ջրաբերդ և Խաչեն գավառներից: Այժմ գյուղն ունի մոտ 700 բնակիչ: Լուսաձորի մասին դեռևս Հայկական սովետական հանրագիտարանում է հիշատակվում, որտեղ ասվում է, որ Լուսաձորի մերձակայքում կան քարանձավներ, որոնք լեզգիների հարձակումների ժամանակ (18-րդ դար) որպես ապաստարան են ծառայել շրջակա գյուղերի բնակիչների համար: Պատմական աղբյուները վկայում են, որ ժայռում և քարափներում ձևավորված բնական այրերը դարեր առաջ հարմարեցվել են որպես ապաստարաններ: Լուսաձորում գտնվող քարանձավներից են Աղավնու քարանձավը (Եղունիկի էր), Սլուլիկի քարանձավը (Սլուլիկի էր) և Մութ այրը (Մութ էր): Աղավնու քարանձավը (Եղունիկի էր) տեղադրված է կրաքարերի մեջ: Քարանձավ հասնելու համար գյուղի սկզբնամասից պետք է քայլել 3 կմ: Զաննի աղբյուր կոչվող տարածքից մինչև քարանձավ պետք է քայլել 1,5 կմ: Քարանձավ տանող ճանապարհին է գտնվում 13-րդ դարի բնակատեղին, որտեղ կա նույն դարի բազմաթիվ խաչքարեր, որոնք մեծ արժեք են ներկայացնում պատմական ժառանգության տեսանկյունից: Քարանձավ հասնելու համար անհրաժեշտ է 1 ժամ, իսկ վերադարձը տևում է 30 րոպե: Ունի 2 մուտք՝ հարավային և արևելյան, որոնք բացվում են խիստ զառիթափ լանջերի վրա: Հարավային մուտքը, լինելով ձորի անդունդի վրա, որպես պատուհան և ձորահովտի հարավ-արևմտյան լանջերի հարմար դիտակետ, մնացել է նախաստեղծ վիճակով, իսկ արևելյան մուտքը, որն ունի 230x600 սմ բացվածք,

փակվել է 2 մետր հաստությամբ պատով, որի ստորին մասում կա դռան բացվածք: Ավանդազրույցի համաձայն՝ շաղախն արվել է այստեղ քշված ոչ-խարների կաթով և կրաշաղախով: Քարանձավի անառիկ դիրքը և պատերը վկայում են, որ այն ծառայել է որպես պաշտպանական կառույց:

Սլուլիկի քարանձավը (Սլուլիկի էր) տեղակայված է կրաքարերի մեջ, ունի 2 մուտք: Քարանձավի երկարությունը մոտ 20 մետր է, լայնությունը՝ 2-4 մետր, բարձրությունը՝ 1-3 մետր, հատակը թեք է՝ տեղ-տեղ ծածկված խոշոր քարաբեկորներով:

Մութ այրը (Մութ էր) տեղադրված է կրաքարերի մեջ, ունի 2 մուտք: Այն ձևավորվել է տեկտոնական ծագում ունեցող ճեղքի լվացման արդյունքում: Նեղ ճեղք է, 1-2 մետր լայնությամբ և մոտ 25 մետր երկարությամբ: Քարանձավը ձևավորվելուց հետո տեկտոնական շարժումների արդյունքում դրա մի թևը մյուսի նկատմամբ ուղղաձիգ ուղղությամբ տեղաշարժվել է մի քանի սմ-ով:

Դեպի քարանձավ արշավի համար անհրաժեշտ է.

- համապատասխան հանդերձանք,
- սպորտային կոշիկներ,
- ջուր,
- չոր սնունդ,
- արևապաշտպան գլխարկ և ակնոց,
- ձեռնափայտ,
- առաջին օգնության պարագաներ,

Տավուշի մարզի քարանձավներն աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ և զբոսաշրջային մեծ ներուժով: Դրանցից շատերը կարող են օգտագործվել սպորտային, արկածային, էքստրեմալ, հնագիտական և գիտաճանաչողական քարանձավային տուրերի իրականացման նպատակով:

Թամարա Ջանվելյան

ԱՐՇԱՎ ԴԵՊԻ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿԻՐԱՆՑ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԵՐԸ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԸ՝

- Տեղակայված է Հայաստանի հյուսիս-արևելյան մասում:
- Կլիման մեղմ է և խոնավ:
- Ծածկված է անտառներով և հիանալի բնական հուշարձաններով:
- Տարվա բոլոր եղանակներին ունի յուրահատուկ գեղեցկություն և ստեղծում է հեքիաթային տեսարան:
- Պասիվ և ակտիվ հանգստի սիրահարների համար հիանալի վայր է:
- Հայտնի է իր առողջարաններով

Այլ կերպ ասած Տավուշն անկրկնելի է:

Մեր ուղևորությունն այս անգամ դեպի Տավուշի՝ Կիրանցի և Առաքելոցի վանքերն էին: Շարժվեցինք առավոտյան ժամը 9:20, ճանապարհը տևեց 20-25 րոպե և մենք արդեն Աճարկուտ գյուղում էինք (ի դեպ Իջևանից- Աճարկուտ հեռավորությունը 16 կիլոմետր է): Աճարկուտից ճանապարհը շարունակեցինք ոտքով:

Վանքը, որը գնում էինք Առաքելոցն էր: Աճարկուտ գյուղից 2 կմ արևմուտք, Կիրանց գետակի ափին, անտառապետ լեռների լանջին է: Քանի որ նոր էինք սկսել ոտքով անցնել ճանապարհը, բոլորս աշխույժ և առույգ էինք: Ամբողջ ճանապարհին հայրենասիրական երգեր էինք երգում ու կարծես ճանապարհն ավելի արագ էինք անցնում: Աշխարհի ամենագեղեցիկ պահերից է, երգես հայրենիքիդ մասին և միևնույն ժամանակ հիանաս նրանով:

Ավերված գյուղատեղեր ու բնակատեղեր շատ կան Աղստևի հովտում. դրանք պատկանում են մեր պատմության ամենատարբեր ժամանակաշրջաններին: Այդպիսի խոշոր բնակավայրերից են Առաքելոց վանքը և գյուղատեղն՝ իր հոգևոր ու աշխարհիկ բազմաթիվ շինություններով: Դրանք

գտնվում են Կիրանց (Գետաշեն) գյուղից 3 կմ արևմուտք: Միջնադարում այս ձորը և լեռնալանջերը խիտ էին բնակեցված: Մատենագիտական հիշատակություններ չեն պահպանվել այս նշանավոր բնակավայրերի ու ճարտարապետական կոթողների մասին: Դրանց պատմական կյանքի միակ վկաները վիմական արձանագրություններն են: Առաքելոց վանք-ամրոցի պարսպապատ տարածքում և նրա շրջակայքում պահպանվել են մի շարք հուշարձաններ:

Ամրոցի երկարությունը 135 մետր, իսկ լայնքը 35 մետր է: Ունեցել է հաստ և ամուր պարիսպներ, որոնցից կանգուն են մնացել՝ հյուսիսային և հյուսիս-արևմտյան անկյունի մասերը իրենց չորս բուրգերով:

ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ՝

- Փոքր չափերի կառույց է,
- Արտաքուստ պատած կաթնագույն, դեղնագույն և կապտագույն սրբատաշ քարերով, իսկ ներսից՝ կրով սվաղված:
- Արտաքին չափերն էն՝ 10.25 մետր 7.45 մետր:
- Ունի բարձր, կլոր թմբուկ և սրածայր վեղար ունեցող գմբեթ:
- Արտաքուստ և ներքուստ որևէ զարդաքանդակ կամ արձանագրություն չունի:
- Լուսամուտները փոքր են, ընդամենը վեց հատ, որոնցից չորսը գմբեթի վրա, չորս գլխավոր ճակատներին, մեկը եկեղեցու հարավային պատի մեջտեղում, իսկ վեցերորդը՝ աբսիդի (շինության ծավալի մաս, որն ավարտվում է գմբեթարդով կամ թաղով) ճակատին, արևելքից:
- Ներքուստ, արևելյան կողմում, ունի մեծ և խորն ընկած աբսիդ:
- Բեմը բարձր է, սանդուխքը հարավից, երեք աստիճանով:
- Խորաններ (ավանդատներ) չունի:
- Հատակը և տանիքը սալպատված են եղել:
- Պահպանվել են որմնանկարների մնացորդներ:

Եկեղեցու շինարարական առանձնահատկություններից գլխավորն տանիքի մեծ թեքությունն է:

Եկեղեցին կանգուն է, սակայն երկրաշարժերից ճեղքեր են բացվել արևելյան և հարավային պատերի մեջ, լուսամուտների գծով, նաև արևմտյան պատի մեջ, մուտքից վերև: Թափված և խախտված են գմբեթի վեղարի ծածկը, տանիքի սալերը և հարավային ու արևելյան պատերի վերին շարքերի քարերը:

ԵՐԿՐՈՐԴ ԵԿԵՂԵՑԻՆ

- Գտնվում է ամրոցի գլխավոր մուտքից հարավ, արևելյան պարսպին կից:
- Փոքր, երկարավուն քառակուսի հատակագծով, միանավ բազիլիկ տիպի թաղածածկ և երկթեք կտուր ունեցող շինություն է:
- Մուտքը հարավային պատի միջից, հարավ արևմտյան կողմին մոտիկ:
- Ունի չորս փոքր և նեղ լուսամուտներ, որոնցից երկուսը արևմտյան պատի մեջ, մեկը մյուսի տակ:
- Կառուցված է խոշոր ավազաքարից:
- Տանիքը հողածածկ է:
- Եկեղեցին կանգուն է

Նրանից մի քանի մետր հարավ, ընդարձակ շինության ավերակներ են: Ենթադրվում է, որ դա եղել է Առաքելոց վանքի սեղանատուն-խոհանոցը: Մի ուրիշ շինություն ծառայել է որպես ընդունարան-դահլիճ:

Առաքելոց վանքից քիչ հեռու գտնում է Միջնադարյան բանտախուցը, կամ ինչպես տեղացիներն են ասում՝ Չղջիկանոց: Բանտախուց մտնելու համար անվախություն է պետք, ներսում անհաշվելի թվով չղջիկներ քաոսային շարժ են կատարում: Բայց ցանկալի է չփորձել ներս մտնել, որովհետև չղջիկներից տարատեսակ վարակիչ հիվանդություններ կարող է ձեռք բերվել:

Հետ վերադարձն ավելի արագ ստացվեց:

9:20 Շարժվեցինք Իջևանից-Աճարկուտ
9:40-9:45 Աճարկուտ գյուղում էինք
9:55 Շարժվեցինք դեպի Առաքելոց վանք
10:25 Առաքելոցում էինք
10:25-11:10 Տարածքի ուսումնասիրություն
11:10-11:15 Հետդարձի կազմակերպում
11:45 արդեն հասել էինք ճանապարհին և տրամադրվում էինք դեպի Կիրանց շարժվելուն:

Մինչ Կիրանց շարժվելը, հասցրինք հիանալ նաև մոտակայքում գտնվող Սրանոց կամուրջով: Սրանոց կամուրջը Կիրանց գյուղի մոտ է, Քարահան գետի վրա:

Նախկինում այս վայրում եղել է Կունեն անունը կրող բնակավայրը: Այն հանդիսացել է գավառային կենտրոն: Այնուհետև գյուղը տեղափոխվել է Կիրանց գետի հովտի միջին հատվածներ՝ Առաքելոց վանքի մոտ:Կամրջի աջակողմյան հատվածում մինչ օրս պահպանվել են բնակավայրի ավերակները: Կամուրջն, ամենայն հավանականությամբ, կառուցվել է 12-13-րդ դարերում՝ Առաքելոց վանքի և դրանից ոչ շատ հեռու գտնվող բնակավայրի կառույցների հետ միասին:

Սրանոցի մոտ գտնվող աղբյուրից հոսող սառը ջուրը մեծ թարմություն է հաղորդում:

12:15 մենք շարժվեցինք դեպի Կիրանցի վանք, մոտ մեկ ժամ քայելուց հետո, ճանապարհին կից գտնվող տաղավարներից մեկում, որոշեցինք ճաշել, ապա նոր շարունակել ճանապարհը:

13:20 արդեն ամեն բան պատրաստ էր ճաշելու համար: Ընդմիջումը տևեց մեկ ժամ: 14:20 ինչպես նախապես պլանավորել էինք սկսեցինք շարունակել ճանապարհը: Օրը բավականին շոգ էր (հուլիսի 18) և միակ դրական կողմն այն էր, որ ճանապարհը մեծամասամբ պատված էր ծառերով:

Ճանապարհը երկար էր, իսկ ամռան տապն ու փոշին ավելի էին բարդացնում ընթացքը:

Երկու անգամ անցանք գետի միջով, նորից երկար ճանապարհ և հասանք աննկարագելի գեղեցկությամբ օժտված Կիրանցի վանք:

Մոտավորապես 15:45 արդեն Կիրանցի վանքում էինք:

ԿԻՐԱՆՑԻ ՎԱՆՔ

Հայ առաքելական եկեղեցու վանքային համալիր է Կիրանց գյուղից մոտ 12 կմ արևմուտք, Կիրանց-ջուր վտակի ձախ ափին ընկած հարթավայրում:

Կիրանց վանքը կառուցվել է 13-րդ դարում: Բաղկացած է աղյուսաշեն, սրբատաշ քարե մանրամասներով երեք եկեղեցուց, սրահ-գավիթներից, սեղանատնից, բնակելի և տնտեսական շենքերից, կամարակապ մեծ դարպասով պարսպից: Եկեղեցու հատակագծային ձևերը, համաչափությունները և դեկորատիվ-գեղարվեստական միջոցները թույլ են տալիս պնդել, որ վանքային համալիրը կառուցվել է 1200-ական թվականներին:

Ժողովրդական ավանդության համաձայն.

Հուշարձանը կառուցող քարագործ վարպետը շատ ընդունակ աշակերտ է ունենում, որը մեն-մենակ կառուցում է վանքը: Ավարտելուց հետո կանչում է վարպետին՝ իր առաջին աշխատանքը գնահատելու: Վանքն այնքան փառահեղ է լինում, որ անվանի վարպետը նախանձում է իր աշակերտին և աշխատում է որևէ թերություն գտնել, բայց չի կարողանում: Երկար մտածելուց հետո, ասում է. «Կիրը անց ես կացրել», այսինքն՝ կիրը շատ է օգտագործել, ինչը նշանակում է, որ վանքն ամուր չէ: Հուսահատ աշակերտն այդ մտքից ինքնասպան է լինում: Այդտեղից էլ վանքի անունը մնում է Կիրանց:

ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ

- Գլխավոր եկեղեցին ունի քառանկյուն հատակագիծ, արևելյան կողմում կիսաշրջան աբսիդով և մեկական ավանդատնով:
- Ծածկը իրականացված է երկու մույթերը (կամարակալ) և ութ որմնամույթերը միմյանց կապող կամարների միջոցով, որոնց վրա վեր է խոյանում գմբեթի ութանիստ բարձր թմբուկը՝ պսակված սրածայր վեղարով:
- Արտաքին ու ներքին ճարտարապետության մեջ իշխում են ուղղաձիգ համաչափությունները, որոնց նպաստում են նաև ծածկերի սլաքաձևությունը, գմբեթի թմբուկի և վեղարի ձգվածությունը և այլն:

- Առանձնանում է իր գեղարվեստական հարդարանքներով:
- Պատերը ներսից սվաղված են կրաշաղախով, որոնց վրա պահպանվել են հոյակապ որմնանկարներ վրացատառ և հունատառ մակագրություններով, որը վկայում է եկեղեցու հայ քաղկեդոնականներին պատկանելը:
- Թմբուկի միջին հարթությունը և պատուհանների շուրջը երեսապատված են երկնագույն շքաղյուսներով:

Մյուս երկու եկեղեցին նույնպես աղյուսաշեն են, նույնատիպ, բայց ավելի փոքր, գտնվում են գլխավոր եկեղեցու հյուսիսային և հարավային կողմերում: Բոլոր երեք եկեղեցիների դռները բացվում են արևմտյան կողմի կամարակապ սրահից:

Մոտ մեկ ժամ և ավել ուսումնասիրեցինք տարածքը: Եվ 17:25 պատրաստվեցինք հետդարձի: Բոլորս էլ բավականին հոգնել էինք ու ճանապարհը կարծես ավելի երկար էր թվում: Վերջին արշավականը ավտոբուսի մոտ հավաս 20:18 րոպեին: Բոլորս ուժասպառ էինք, բայց և ունեցանք հիանալի և հագեցած օր:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ՝

1. Վատ եղանակային պայմանների դեպքում, ցանկալի է արշավներ չկազմակերպել նշված ուղղություններ:
2. Արշավ գնալիս յուրաքանչյուրդ ձեզ հետ պարտադիր վերցրեք սառույցով ջուր:
3. Եթե նախատեսում եք թեյ կամ սուրճ խմել, ձեզ հետ վերցրեք ճանապարհային փոքր թերմոս:
4. Բոլորդ ձեզ հետ ունեցեք ուսապարկեր:
5. Հագնվում եք պայմաններին համապատասխան:
6. Չեք մոռանում արևից պաշտպանող միջոցներ՝ ակնոցներ, գլխարկներ:
7. Պարտադիր ունենալ անձնական դեղատուփ:
8. Ունենում եք արշավական փայտիկներ:

9. Վերցրեք ձեզ հետ փոխնորդ հագուստ, ինչպես նաև տաք հագուստ, քանի որ եղանակն անկանխատեսելի է:

10. Ունեցեք լապտերներ, նունիսկ եթե գիտեք, որ արշավը կավարտեք մինչ մայրամուտ:

11. Չշեղվել երթուղուց և չհեռվանալ խմբի անդամներից:

12. Բնության նկատմամբ պետք է լինել հոգատար

13. Պահպանեք մաքրություն, հավաքեք ձեր թողած աղբը:

14. Եվ ամեն ինչ պատրաստ է անմոռանալի օր ունենալու համար:

Վարդինե Ներկարարյան

ՏԱՎՈՒՇՆ ԱՂԱՎՆԱՎԱՆՔԻՑ

ԱՂԱՎՆԱՎԱՆՔ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Աղավանավանք փոքր վանական համալիրը գտնվում է Տավուշի մարզում՝ Աղավնավանք գյուղում: Տեղակայված է Ախնաբաթ անտառամասում՝ շրջապատված լինելով կենի (կամրմրածառ) ծառատեսակով: Վանական համալիրի՝ Աղավնավանք անվան ծագումն անհայտ է, քանի որ չկան տեղեկություններ: Անհայտ է նաև՝ գյուղն են կոչել վանքի անունով, թե հակառակը: Հարկ է նշել, որ վանքը 12-13-րդ դարերի կառույց է: Վանքը հայտնի է եղել նաև Սբ. Աստվածածին Անապատ, Ախնաբաթ կամ Հախնաբաթ անուններով:

ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑ

Վերոնշյալ Ախնաբաթ կամ Հախնաբաթ անունների հետ կապված կա մի ավանդազրույց, ըստ որի՝ վաղ անցյալում՝ այս վայրերում ապրել է մի երիտասարդ, ով բույսերից պատրաստած սպեղանիով կարողանում էր բուժել զանազան հիվանդություններ: Երիտասարդը դարձել էր բոլորի սիրելին և սպասված հյուր էր յուրաքանչյուրի օջախում: Շատերն էին դիմում նրա օգնությանը՝ անկախ նրանց սոցիալական վիճակից: Մի անգամ էլ տեղի իշխաններից մեկի դուստրը՝ գեղեցկուհի Նաբաթը, ծանր հիվանդանում է: Ոչ ոք չի կարողանում բուժել աղջկան, և իշխանին խորհուրդ են տալիս կանչել սպեղանի պատրաստող տղային: Երիտասարդը, մի քանի օր շարունակ հավաքելով տարբեր դեղաբույսեր, թուրմ է պատրաստում, որի օգնությամբ էլ դեռատի աղջիկը շուտով ոտքի է կանգնում: Եվ երջանիկ հայրը կարգադ-

րում է մի պարկ ոսկի բերել երիտասարդի համար, սակայն տղան իշխանից դստեր ձեռքն է խնդրում:

Տեսնելով տղայի ազնվությունն ու նվիրվածությունը՝ իշխանը համաձայնվում է: Սակայն Նաբաթը որքան գեղեցիկ, այնքան էլ փառասեր էր. մերժում է տղային՝ ասելով, որ աղքատ բուժակը վայել չէ իրեն: Հուսահատ տղան թողնում է իր ունեցվածքը, հարազատներին, ընկերներին և օրեր շարունակ մեն-մենակ շրջում անտառներում: Սիրած աղջկա պատկերը հայտնվում է մեկ առվակի ջրերի, մեկ առավոտյան ցողի, մեկ անձրևի կաթիլների մեջ: Անցնում են օրեր ու ամիսներ... Մի անգամ էլ, հայտնվելով ժայռի գագաթին, երիտասարդը նայում է ներքև և վազող առվակի ջրերի մեջ տեսնում գեղեցկուհի Նաբաթի Ժպտացող պատկերը: Նաբաթը ձեռքերը վեր պարզած կարծես իր գիրկն է կանչում տղային: «Ա՛խ, Նաբա՛թ» վերջին անգամ կանչում է տղան ու ժայռից նետվում ներքև: Համաձայն ավանդազրույցի՝ այս բառերից է առաջացել Ախնաբաթ անվանումը: Ասում են նաև, որ, իմանալով տղայի մահվան մասին, գյուղացիները, որոնք անսահման սիրում էին նրան, որոշում են տղայի պատվին մի եկեղեցի կառուցել: Պատահական չէ, որ եկեղեցին էլ, ինչպես սիրահար տղան կղզիացած է անտառում, և այդ մենաստան-անապատ բառերից էլ առաջացել է նրա այժմյան անունը՝ ս. Աստվածածին Անապատ եկեղեցի:

Ճանապարհները գտնվում են լավ վիճակում: Սակայն ճանապարհն ավելի հաճելի կլինի, եթե ոտքով անցնեք այդ ուղին: Աղավնավանք տանող ճանապարհի գեղեցկությունը կթեթևացնի արշավականների մեջ կուտակված հոգնածությունը: Մեղմ կլիմայական պայմանները հնարավորություն են տալիս այցելել Աղավնավանք առանց եղանակի տեսությանը հետևելու: Սակայն անկախ եղանակային պայմաններից արշավականը պետք է պատրաստ լինի ցանկացած եղանակային անակնկալների:

«ԱՂԱՎՆԱՎԱՆՔԻ ԿԵՆՈՒ ՊՈՒՐԱԿ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐ

Արգելավայրերը մշտապես կամ ժամանակավորապես առանձնացված տարածքներն են, որտեղ ապահովվում են էտալոնային, գիտական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող բնական համալիրների և նրանց տարրերի տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը: Ներկայումս ՀՀ-ում ստեղծված են 26 արգելավայրեր, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է ՀՀ տարածքի 3.44%-ը:

«Աղավնավանքի կենու պուրակ» արգելավայրը դրանցից մեկն է: Կազմավորվել է 1959 թվականին, ունի 25 հա տարածք: Գտնվում է ՀՀ Տավուշի մարզում՝ Միափորի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերին, Ծաղկուտ լեռնաբազուկի վրա, Խաչարձան գետի ավազանում, ծովի մակարդակից 1400-1700մ բարձրություններում, ռելիեֆի ամենացածր կետը՝ գտնվում է ծովի մակերևույթից 1078մ, իսկ ամենաբարձրը՝ 2220մ բարձրության վրա:

Ստեղծվել է Երրորդային դարաշրջանի մնացուկային հատապտղային կենու եզակի պուրակի պահպանության նպատակով: Այստեղ է գտնվում Կարմիր գրքում գրանցված՝ Հարավային Կովկասի հատապտղային կենու ամենամեծ պուրակը: Կենին պատկանում է մերկասերմեր բաժնի, փշատերևավորներ դասի, սոճազգիներ կարգի, կենազգիներ ընտանիքին: Այստեղ հանդիպում են 300-400 տարեկան ծառեր, որոնք ունեն մինչև 25 մ բարձրություն և 80-100սմ տրամագիծ: Հատապտղային կենին մշտադալար բարձրահասակ ծառ է՝ մուգ կանաչ կոնաձև սաղարթով, այն բազմանում է բնական ճանապարհով՝ սերմերից: Աճում է խիստ դանդաղ, տարեկան 1,5-2,5սմ: Ստվերադիմացկուն է, անտառում զբաղեցնում է երկրորդ շարահարկը: Կենու երկրորդ՝ կարմրածառ անունը պայմանավորված է կարմրավուն բնափայտով, ամրության և գեղեցկության համար կոչում են նաև գեղձի, բզենի, նետածառ, զառնաբ: Այն մարդկությանը հայտնի է դեռևս 3000 տարի առաջ, նախ-

կինում նրանից պատրաստել են սարկոֆակներ (բնափայտի՝ ջրում չնեխելու, սնկերի և միջատների նկատմամբ կայունության շնորհիվ)։ Բնափայտը արժեքավոր է, ամուր, գորշակարմրավուն, պատրաստում են ռազմական գործիքներ, կենցաղային իրեր, հետագայում լայնորեն կիրառվեց կահույքի արտադրության և ատաղձագործության մեջ։

Ասեղնատերևները, կոները և ընձյուղները պարունակում են տաքսին ալկալոիդ, տերևները՝ նաև եթերայուղեր։ Բույսն ամբողջովին թունավոր է։ Մեղրատու է։

Բուսաշխարհը հարուստ է, կարող եք հանդիպել դաշտային ձիաձետի, սովորական խնկածաղկի, խոտային կտտենու, ազնվամորու, դաղձի և այլ բուսատեսակների։ Ծառատեսակներից տարածված են՝ արևելյան հաճարենին, սովորական բոխին, կաղնու վրացական և խոշորառէջ տեսակները։ Մեծ տարածում ունեն համակեցությամբ ապրող օրգանիզմները։ Հանդիպում են հարյուրից ավելի տեսակի էպիֆիտային քարաքոսներ։

Ֆաունայի նեկայացուցիչներից կարող եք հանդիպել եղնիկի և ՀՀ Կարմիր գրքում գրանցված սև փայտփորի։

Արգելոցի մուտքից 1.8 կմ հյուսիս-արևելք, ձորի մեջ, Խաչարձան գետակի աջ ափին է գտնվում Աղավնավանք վանքային համալիրի Սբ. Աստվածածին եկեղեցին (12 - 13-րդ դարեր)։

ԱՂԱՎՆԱՎԱՆՔ ԵՎ ԿԵՆՈՒ ՊՈՒՐԱԿ ՏԱՆՈՂ ՈՒՂԻՆ

Երթուղու ամփոփ նկարագիրը.

Մեկնարկի կետից շարունակեք քայլել առվակի հարակից ճանապարհով։ Անցնելով 700-800մ՝ ճանապարհի ձախ մասում կհանդիպեք մամռապատ ժայռաբեկորներ։ Շարունակելով ճանապարհը՝ կհասնեք Աղավնավանքի 11-13րդ դարերում կառուցված սուրբ Աստվածածին եկեղեցուն։ Եկեղեցուց դեպի հարավ-արևելք պահպանվել են շինությունների մնացորդներ, որոնք հավանաբար եղել են միաբանության բնակելի

և տնտեսական շենքերը: Եկեղեցուց արևելք տարածվում են գյուղատեղիի ավերակներ, որոնք ծածկված են խիտ անտառներով: Եկեղեցուց 100մ հեռավորության վրա գտնվում է մի գեղեցիկ փայտաշեն տաղավար, որտեղ դուք կարող եք հանգստանալ, սնվել և ձեր ծարավը հագեցնել սառնորակ աղբյուրի կենարար ջրով:

Երթուղու տևողությունը.

1.5 ժամ/45 րոպե մեկ ուղղությունը/հեռավորությունը՝

1.7կմ մեկ ուղղությունը/:

Նշանների առկայությունը՝ առկա են,

Ճանապարհի տեսակը՝ երկկողմանի,

Բարդության աստիճանը՝ միջին,

Բացարձակ բարձրությունը՝ 1052մ-1239մ,

Ճանապարհի վիճակը՝ գրունտային

Հեռախոսակապ՝ կա:

ԱՐՇԱՎԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԻՇԵՔ՝

- Բնության հետ պետք է լինել հոգատար,
- Մի շեղվեք երթուղուց, հետևեք ուղենշաններին,
- Պահպանեք մաքրություն, հավաքեք ձեր թողած աղբը և դուրս բերեք տարածքից,
- Կրակ վառել միայն հատուկ նախատեսված վայրերում կրակարաններում:

Հնարավոր վտանգներ՝

Միջատներ, սողուններ, ֆիզիկական վնասվածքներ, գերհոգնածություն:

Ցանկալի է, որ դուք ֆիզիկապես պատրաստ լինեք արշավին: Ձեզ հետ ունենաք երկարաճիտ կոշիկներ, ինչպես նաև առաջին օգնության անհատական պարագաներ, արևային ակնոցներ և գլխարկ: Հագուստը լինի դիմացկուն և հարմար:

Թինա Ջանվելյան